

## ՍՏՐԵՊՏՈՉՈՏՈՑԻՆԱՅԻՆ ԴԻԱԲԵՏԻ ԴԵՊՔՈՒՄ ՍԱՂՄՆԱՅԻՆ ՀԱԿԱՌՌՈՒՑՔԱՅԻՆ ՄՈԴՈՒԼՅԱՏՈՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՏԱՂԱՊՐՈՏԵԻՆՆԵՐԻ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԵՎ ԱԿՏԻՎՈՒԹՅԱՆ ՎՐԱ ԱՌՆԵՏՆԵՐԻ ՄՈՏ

Վահեդյան Վ.<sup>1</sup>, Աղաջանովա Ե.Մ.<sup>2</sup>, Սիմոնյան Մ.Ա.<sup>3</sup>, Աղաջանով Մ.Ի.<sup>1</sup>

<sup>1</sup> Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի բիոքիմիայի ամբիոն,  
Երևան, Հայաստան

<sup>2</sup> Երևանի Մ. Հերացու անվ. պետական բժշկական համալսարանի Էնդոկրինոլոգիայի ամբիոն,  
Երևան, Հայաստան

<sup>3</sup> ՀՀ Ազգային Ակադեմիայի Բուսիաթյանի անվ. կենսաքիմիայի ինստիտուտ, Երևան, Հայաստան

Ստրեպտոզոտոցինով հարուցված դիաբետի դեպքում առնետների մոտ դիտվում է պրոօքսիդանտային մետաղապրոտեինների (թթվային բնույթի NADPH օքսիդազներ կամ ցիտոքրոմ  $b_{558}$ -ի ֆրակցիաներ, ստացված Էրիթրոցիտների թաղանթներից, փայծաղի բջջաթաղանթներից, միտոքոնդրիումներից և կորիզներից) մակարդակի և սուպերօքսիդի-գոյացման ու ֆերրիհեմոգլոբինի-վերականգնման ակտիվությունների աճ: Միաժամանակ դիտվում է փայծաղի բջիջներից ստացված ցիտոքրոմ c-ի մակարդակի աճ և Էրիթրոցիտների ցիտոզոլից ստացված ցիտոքրոմ  $b_5$ -ի և արյան շիճուկից ստացված ու բարձր խտություն ունեցող սուպերօքսիդ գոյացնող լիպոպրոտեինի՝ սուպրոլի մակարդակների նվազում: Այդ փոփոխությունները տեղի են ունենում հակաօքսիդանտային ակտիվությամբ օժտված մետաղապրոտեինների (Cu,Zn-սուպերօքսիդիսմուտազա, Mn-սուպերօքսիդիսմուտազա և կատալազա, ստացված փայծաղի բջիջների և Էրիթրոցիտների ցիտոզոլից) ակտիվության մակարդակի անկման ֆոնի վրա, հանգեցնելով հակաօքսիդանտային և պրոօքսիդանտային մետաղապրոտեինների միջև առկա ֆիզիոլոգիական հավասարակշռության և թթվածնային հոմեոստազի բնորոշ խախտման: Արդյունքում դիտվում է թթվածնի ակտիվ միացությունների նյութափոխանակության խանգարում, օրգանիզմի հյուսվածություն և մահացած կենդանիների թվի աճ: Կանխարգելիչ ռեժիմով ներարկված ՍՐՈՒՄ-ը ցուցաբերում է որոշակի հակաօքսիդանտային կարգավորիչ ազդեցություն, որը մասնակիորեն ցուցանիշները մոտեցնում է նորմայի: ՍՐՈՒՄ-ը *in vitro* օժտված չէ հակաօքսիդանտային ազդեցությամբ, չնայած նրա դրական ազդեցությունը հնարավոր է կապված լինի հակաօքսիդանտային մետաղապրոտեինների մակարդակի բարձրացման հետ *in vivo*: